Ջատագովության համառոտագիր

Հայաստանի էներգետիկ քաղաքականության ԵՄ ստանդարտներին համապատասխանեցման արագացում՝ ՀԸԳՀ-ի շրջանակներում

Սույն համառոտագիրը ներկայացնում է Հայաստանի էներգետիկ ոլորտի վերաբերյալ 2025 թվականի ՀԸԳՀ մոնիթորինգի զեկույցի հիմնական եզրակացությունները: Հետազոտությամբ գնահատվել է, թե որքանով է Հայաստանը համապատասխանում ԵՄ էներգետիկ հրահանգներին, որոնք ներառում են էներգաարդյունավետության, շենքերի էներգաարդյունավետության, էլեկտրաէներգիայի շուկաների եւ վերականգնվող էներգետիկայի ոլորտները: Մեթոդաբանությունը ներառել է փաստաթղթերի վերլուծության եւ ՀԸԳՀ-ի դրույթներին ու ԵՄ իրավակարգավորիչ փաստաթղթերին դրանց համապատասխանության գնահատման մեթոդները: Արդյունքները լույս են սփռում իրականացման հիմնական մարտահրավերների եւ բարեփոխումների ռազմավարական առաջնահերթությունների վրա:

Առաջնահերթ առաջարկություններ.

- Ավարտին հասցնել եւ ընդունել «Վերականգնվող էներգետիկայի եւ էներգաարդյունավետության մասին» եւ «Էլեկտրաէներգիայի մասին» նոր օրենքները՝ ԵՄ էներգաարդյունավետության մասին եւ Շենքերի էներգաարդյունավետության մասին վերանայված հրահանգների ինտեգրմամբ:
- Մշակել եւ ընդունել ՀՀ հանրային եւ բնակելի շենքերի վերանորոգման երկարաժամկետ ռազմավարություն՝ 10-ամյա գործառնական ծրագրով, ներառյալ ԳԶԷԾ եւ ԶԷԾ հասկացությունների սահմանումն ու իրականացման ճանապարհային քարտեզները:
- Մշակել Էներգետիկ եւ կլիմայի ազգային ծրագիր՝ էներգախնայողության եւ կլիմայի մեղմացման համալիր նպատակներով եւ իրականացման մեխանիզմներով:
- Ստեղծել եւ ֆինանսավորել էներգետիկ ծառայություններ մատուցող ընկերությունների ազգային շրջանակ եւ ներդնել շուկայական մեխանիզմներ՝ էներգախնայող ներդրումները խթանելու համար:
- Ստեղծել շենքերի էներգաարդյունավետության թվային հավաստագրերի համակարգ եւ մշակել ԵՄ չափանիշներին համապատասխան հավաստագրված էներգետիկ փորձաքննողների ազգային վերապատրաստման ծրագրեր:
- Ներդնել էներգետիկ աղքատության ազգային ցուցանիշների համակարգ եւ տալ «էներգետիկ աղքատություն» եզրույթի պաշտոնական սահմանում՝ խոցելի խմբերին արդյունավետ աջակցություն ապահովելու համար:

- Մշակել ֆիսկալ գործիքներ՝ տնտեսության բոլոր ոլորտներում էներգաարդյունավետության ֆինանսավորման հասանելիությունը դյուրացնելու համար՝ օգտագործելով անհատականացված գործիքներ, ինչպիսիք են սուբսիդավորված էներգետիկ փորձաքննությունները, նվազեցված տոկոսադրույքները, դրամաշնորհների համաֆինանսավորումը, վարկային երաշխիքները եւ այլն:
- Ներմուծել էներգաարդյունավետության ուղղությամբ ներդրումների շուկայական խթանների կարգավորիչ դրույթներ, ներառյալ սակագնային բարեփոխումները՝ պահանջարկի կառավարմանն աջակցելու համար:

Թեեւ որոշ ուղղություններով օրենսդրական համապատասխանեցում է իրականացվել, Հայաստանը դեռեւս չունի կարեւոր գործիքներ՝ «Եվրոպական կանաչ գործարքի» պահանջներին համահունչ էներգետիկ բարեփոխումների լիարժեք իրականացման համար: Ռազմավարական պլանավորման շրջանակների բացակայությունը, ինստիտուցիոնալ սահմանափակ կարողությունները, հավաստագրման հնացած համակարգերը եւ ԵԱՏՄ շրջանակներում առկա հակասություններ առաջացնող պարտավորությունները շարունակաբար խոչընդոտում են առաջընթացը: Բացի այդ, դոնորների կողմից տրամադրվող տեխնիկական աջակցության անցումային փուլն, իր հերթին, հանգեցրել է բարեփոխումների շարունակականության խզմանը:

Սույն համառոտագիրը հիմնված է ՀԸԳՀ-ի էներգետիկային վերաբերող դրույթների մոնիթորինգի զեկույցի վրա:

Հեղինակ՝ Աստղինե Պասոյան | astghine@gmail.com

Սույն հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Դրա բովանդակության պատասխանատվությունը կրում է բացառապես հեղինակը՝ Աստղինե Պասոյանը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները: